

30

ՄԵՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

30

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAZ
65 Grand'rue de Péra, Taxim, 65

ԱՊՐԵՆԻ ԶԻՅԱԼԻՆՆԵՐ
Կարգադրող իշխան
Թարգման իշխան
Մեղակալ լեզուական իշխան
Զրուցող
Մեղակալ լեզուական իշխան
Զրուցող

ՉԱՐՇԵՆՊԻՆ ԴԷ ԶՈՒՊԱԹ ԻՐԵՎԱՆԻ
ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՆՈՒՐ
Իրանի իշխան պարսկալեզու
Թարգման իշխան
Մեղակալ լեզուական իշխան
Զրուցող

مجموعه اخبار
مکاتوبی قسیم جادوسی نومو

ՊԱՏՄԱՆՈՒՄԻ ՄԵՃ

ՀԱՄԱԿԱՐԱՆԱՅ՝ «ԹԵՐԱՅԵԱՆ ԳԵՐԱՊԱՅԵԱՆ»
ՈՒՆ ԽԼՈՒՄՍԱՆՔԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԹՈՒՆՈՒՄ
ՄԱԳԻՐՆ» ՈՒՂՂԱՆԱԼ «ՔԱՅ ՆԱՄԱԿԻՆ».

«Մեճմուսի Ախպարի» 1927 թվականի
թերթին մէջ, մեր Հայ-Կաթողիկէ հաս-
րակութեան ազգային իրաւունքները ա-
ռաթող կոթորակաւ յաւանդուող դեկտատորի
մը սէգ և խրոխտ ընթացքը հարուածող,
և ազգասիրական եռանդութեամբ ու հոգ-
ւով գործած Զեր մի իմաստալից յոգ-
ւածն մեծ հաճաքով կարգադրի, Յիւրախ,
հաճաք մը, Ուրախութիւն մը, զորս
զգալիքը երջանիկ անցեալներու, մանա-
ւանդ երբեմն յաճախ տեսակցութեամբ
ինձ վաղեմի և շատ ծանօթ Գրեհուկեպէ-
եանց ազնիւ գերդաստանին յիշատակաւ,
որոնց անդամներն մին էր։ Ուստի շնոր-
հաւորելով և ես վստահութեամբ Զեր
ջանքը, որով ազգային իրաւունց պաշ-
պան կը հանդիսանալ, և խրախուսելով
մտերմարար զԶեր յորդորելու առայդ-
նակ զայս միասիրտ և միահոգի աշխա-
տելու ձգտում համար օր մը առաջ, այն
որ նախելով Աթոռն Մովսիսի, այլ և այլ
ապօրէն միջոցներով մեր ազգային գոյու-
թեան կորուստը կ'սպառնայ, կը յայտա-
բարեմ իմ անկեղծ շնորհակալութիւններս
Զեր այն աշխատանքի մասին, որով լե-
ցուցած և լրացուցած էր իմ այն պակասը,
զոր դեռ ունէր անշուշտ իմ յոգեւածս։

Ներդրութիւն, մի քանի խօսք ըսեմ
իստեղծութիւն Զեր ըսածներուն։ Այո՛,
ինչպէս իրաւամբ կ'ըսէք, Թերզեան Գե-
րապաշտապէն խղճմանը բաւական եր-
կար տարիներ յերաժմի մը ենթակուած
է, բայց նա՛ իւր խղճմանը, ո՛չ միայն
լեւարտիկ այս տեսակ ցաւալի հիւանդու-
թեան ենթակայ լինելը կ'ուզէ ընդ միշտ,
այլ նաեւ եթէ գերագոյն կարողութեան
ձիրք մը ունենար, եթէ գրական զո-
րութեամբ հնարք մը գտներ, եթէ Նե-
րուցանեց պէս հնչեալ համազօրելով
իւր կողմը շահուիլը կարելի ըլլար, հա-
ւատացէք որ իսկոյն պիտի հանէր իր
վրայէն։ Այնտեղ, կամ դրամով պի-
տի լուծուելը, և կամ այլ և այլ չինձու
խօսքերով պիտի համոզէր այդ իր խղճ-
մանը, վախճանով օր չ'ըլլայ յէ այն
օր մը յանկարծ ասանալով տեսակ մը ա-
ռողջութիւն և առողջութիւն, ըմբոստա-
նայ իւր քմահաճոյքին։ Եւ այսպէս պի-
տի ընէր Թերզեան, եթէ ունենար ձեռքը
այս անկարելի միջոցները։ Մինչդեռ ինչ-
պէս կը գրէ սրբազան Առաքեալն, ճշմար-
տ որ զօրէնս չունին, անձանց իւրեանց իսկ
են օրէնք, որք ցուցանեն զգործս օրի-
նացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայու-
թեամբ մտաց իւրեանց» (Հաւով. Բ. 14)։
օրէնք չունեցողներն ալ իրենք իրենց
մէջ օրէնք ունին, որոնք կը գործադրեն
այն օրէնքը, որ գրուած է սրտերուն
մէջ, և ասոր ճշմարտութիւնն ալ կը վկա-
յեն իրենց խղճն ու միտքը։ յիւրախ,
օրէնք չունեցող հեթանոսներն, բարբա-
րոսներն, վայրենիներն անգամ հլու հպա-
տակութիւն կը խոստովանին այն բնա-
կան օրինաց, որ գրուած է իւրաքանչիւր
մարդոյ անդատին ի սկզբանէ աշխարհի
ընթացքին Արարչէն, և անմիջական նա-

զանդութիւն անաշու զաւառորի, այնչէ
խղճմանը ձայնին, որ կը վճռէ թէ
չար է ըրածին, հակառակ է օրինաց,
երբ մարդասպանութիւն և գողութիւն
կ'ընեն, կը հպարտանան, կը ըստանան,
կը բամբասեն, կը ստեն, անիրաւ պա-
հանջանքներով խաղաղութիւնը կը վրդա-
վեն, ինչ օր իրենք իրենց համար չեն
ուզեր՝ օրինակներուն կ'ընեն։

Կը փափաքէին որ Թերզեան Գե-
րապաշտապէն, գէթ բարբարոսներուն, վայրե-
նիներուն այս օրինակին հետեւէր, բայց
չուզէր նա երբեք ասանկ ըստնել, բաւա-
կան է որ ունի քմահաճ վարմունք և յա-
մառութիւն, ամենայն ինչ իրեն համար,
և աստեղ ռեւէ հիւանդութեան զերծ
պահելու համար՝ ամէն տեսակ առողջա-
պահական միջոցներու կը գործէ, կ'ուզէ
զօհել մինչև անգամ իւր խղճմանը՝
փափաքելով որ այն ենթակուած ըլլայ
միշտ մահաբեր հիւանդութեան, թմբու-
թեան, անզգայութեան, հեռանայ իրմէն
ցմիշտ, և կամ մեռանի վերջապէս, որ
պէս զի ազատուի անոր աշխատելու
և ձանձարալի խայթելէն։ Բայց, Գե-
րապաշտապէն, ինչպէս կրնաք դուք վերջով
վերջերը բռնել։ Հայ-Կաթողիկէութեան
բարին մահացող վերջը բացած էք ա-
րդէն, և հիմա ալ վտանակ ապագան իւր
հինքը, Կաթող-Պատրիարքական Աթոռին
վրայ մնալու տեսնով մոլեգնած՝ Զեր
պատուով և աստիճանին անվայել, ամե-
նաստորին միջոցներով կը ջանաք նորա-
նոր վերջը աւելցունել։ Բայց գիտե՛ք
ըլլաք որ՝ այս ազգը, որուն գոյութիւնը
բառնալու կ'աշխատէ ի միշտ, Զեր քմա-
հաճաքը գո՛ր ընկու համար, շատ հար-
ուածներու ենթակայ եղած, շատ կարե-
վեր վերջեր առած, շատ արկածներու
կործնեց տուած է, և վերջապէս իւր վեր-
ջերուն դարձանք միշտ գտած, ու ազ-
գատեաց ընտանդներուն յաղթած է։
Զեր ջանքը, ճիշդ, յամառութիւնը, ինք-
նահաւանութիւնը՝ պիտի տեսն, շատ,
շատ, երկու ամիս, չորս ամիս, վեց ա-
միս, վերջապէս տարի մը, վերջը, գի-
տէք անշուշտ վերջն ինչ պիտի ըլլայ,
ինչպէս հիմա, վերջը ա՛լ աւելի պիտի
մնաք աստաբեկ, կոճի մը, միայնակ, «պի-
ելին նշար վար, ի՞նչ էլին սէս վար»
միւս կողմը ընդհանուր հասարակութիւն
մը՝ միասիրտ և միաձայն՝ պիտի ընկնէ,
պիտի տապալէ զԶեր անազնի կործան-
մամբ, և այն կործանումը պիտի ըլլայ
«մեծ յոյժ», քանի որ փոքր ինչ աւետա-
րանական խոսքերով հետեւելով,
չէք կրնար սանձադարձ և ընկնել Զեր
վատթար կամապաշտութիւնը և քմահա-
ճոյքը, ու օրինակ առնել այն Աստուա-
ձառէր, հեղահամար, ազգասէր և ազգա-
տասէր՝ ալեւազարդ Սապապեան Կաթող-
Պատրիարքէն, որ իր ծերութիւնը ազգա-
լին գործերու յետաձգութեան պատ-
ճառ նկատելով, տարաձայնութեան տեղի
չտալու և ազգին յառաջդիմութեանը
համար՝ սքանչելի խոսքերով հետեւելով
հրաժարականը տուաւ և քաջուցեալ։
Բայց դուք, Գե-րապաշտապէն, Զեր փա-
ռապետութիւնը կէտ նպատակի առած էք
գիտե՛ք կը մտածէք եթէ հրաժարիմ, ինչ
պիտի ըսեն մարդիկ, մանաւանդ որոնք
որ վրաս բարի համարում ունենին, հապա-
նեւորպաքեք, ինչ տաղանդիկ կնճիւր, կը

օխալիք սակայն, Գե-րապաշտապէն, անա-
ւատիկ բուն այս կէտն է, որուն մէջ
պիտի ցուցնէք մեծ կորով և վեհանձնու-
թիւն յաղթելու Զեր անձնասիրութեան
ու փառասիրութեան՝ հետեւելով աւե-
նարանական սքանչելի խոսքերով։
Եւ գիտէք արդէն որ խոսքերով իւրեւր,
հեղահամարութիւնը, խաղաղասիրութիւնը
ամէն ժամանակ և ամէն դասակարգի
մարդիկներէն սիրուած է։ Իսկ ընդհա-
կառակն՝ անոնց հակառակ մոլութիւնն-
ներն՝ միշտ գարշելի, խորշելի ու ատելի
երեւցած են։ Նորէն կը կրկնեմ, Ս. Պո-
ղոսի այն խօսքը, զոր ի վկայութեան
բերած էի՝ Զեր խղճմանը բոլորը
ստորագրող յոգեւածի մէջ. «այ կերպց
միս յաւիտեան՝ զի մի՛ գեղարար իմ գա-
թակցեցողից»։ Դուք կը պնդէք որ Զեր
ընտրութիւնը Աստուածային է, ժողո-
վաւորը խառնուելու իրաւունք չունի.
շատ լաւ։ Զեր ընտրութիւնը կամ Աստ-
ուածային էր, և կամ մարդկային. եթէ
մարդկային էր, ուրեմն Զեր ընտրութիւնը
ապօրինաւոր է, Կաթող. Պատրիարք չէք
կրնար ըլլալ Տանն Կիլիկիոյ՝ դռնէն մտած
չէք, իսկ եթէ Աստուածային էր, ինչու
ժողովուրդը ընտրեց զԶեր, և առաւելու-
թեան քուէ տուաւ Զեր համար, և ժո-
ղովրդեան քուէով եղած ընտրութիւնը՝
ի՛նչպէս Աստուածային կրնայ ըլլալ. գի-
տե՛ք, այս կարեւոր կէտը անշուշտ չպիտի
հաճիք լուսարանել, որովհետեւ չունիք
դեռ կորովը յաղթելու Զեր յամառու-
թեան, ուրեմն ես ըսեմ. այո՛, կ'ընդու-
նինք, Զեր ընտրութիւնը Աստուածային
է, բայց զօրութեամբ ձայնին հասարա-
կաց, զի «ձայն բազմաց՝ ձայն Աստու-
ծոյ»։ Եթէ ժողովուրդը Զեր համար մե-
ծամասնութեան քուէ չտար, չընտրէր
զԶեր, դուք ինքնակոչ կրնայիք բազմի-
կաթող. Պատրիարքական Աթոռը, և պըն-
դել օր ընտրութիւնս Աստուածային է։
ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՃ
44 Փետր. 1912

Կ Ո Չ ՀԱՅ ԿԱԹՈՂ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ Եւ ԱՄԲՈՂ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ինչպէ՛ս գիտէք «Մեճմուսի» բաժա-
նորդները՝ բոլոր գրեթէ կղերներէն. չկայ
վարդապետ մը՝ որ «Մեճմուսի» չըստանայ.
Իսկ հիմակ Թերզեանի հրամանաւ բոլորը
պիտի դադարեն։ Ինչու, որովհետեւ
«Մեճմուսի» վեհութիւն, քաջութիւն ու
նեցաւ, իր օգուտը և իր շահը, իր բոլոր
բաժանորդները թողուլ և արդարութիւ-
նը, ազգին շահը, ազգին պատիւը պաշտ-
պանել։
Մէկ բաժանորդի սիրտ չցաւցնելու
համար, ամբողջ ազգի մը սիրտը ցաւցե-
նող խաղաղութիւնը շատ օւնինք։ Մէճ-
մուսի իր պարտականութիւնը կատարեց,
ու զօհեց շատ բան մեզ համար, ազգին
համար։ Առաջին «Մեճմուսի» կարդացող
չկար, կղերներու ճիւղիկը կը չալէ կը-
սէին. իսկ հիմակ ձեռքէ ձեռք կը քա-
նցուեն, գիւղէ գիւղ, տունէ տուն կը
սանին, ինչու՞ օրովհետեւ տեսնե՛ք

«Մեճմուսի» ամէն ինչ օտար տակ առաւ
ազգին համար։

Գալերը՝ իրենց քաջութիւնը պատե-
րազմի դաշտի վրայ ցոյց կուտան։ Մէճ-
մուսին ալ այդպէս ըրաւ։ «Մեճմուսի»
ձայնը՝ շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ,
մեծ կշիռ, օրովհետեւ հասարակ թերթ մը
չէր, կղերներու պաշտպան, Պատրիարքա-
րանի օրկէսն և կողմնակից, պաշտօնական
ձայն մը և շատեր անոր ձայնին կ'սպասէին,
«եսանանք Մեճմուսի ինչ կ'ըսէ» և «Մեճ-
մուսին»՝ անմահ Պապիկեանի պէս ճշմար-
տութիւնը օւրացողներուն դէմ անվեհեր
կերպով պոռաց. «Հայերը յանցանք չու-
նին»։ Այս է ճշմարտութիւնը, Հայը անս-
մեղ է։ Թողանան ալ լրագրական բեմէն
պոռաց՝ ժողովուրդը յանցանք չուէն,
մեղաւորը, յանցաւորը թերզեանն է...։

«Մեճմուսի» ո՛չ թէ պիտի ինչալ, ինչ-
պէս կ'ըսեն կղերները, այլ շատ պիտի
բարձրանալ, ազգը կը խելէր օր այդ
ազգատեաց կղերներու ազոտանանքու-
րու ցանկը դնէք «Մեճմուսի» մէջ, և
մենք ատոնց մէկին տեղ 10 (տաս) բա-
ժանորդ կը գտնենք։ «Մեճմուսի», այսու-
հետեւ պէտք է տարածել ամէն կողմ, և
կղերական թերթ մը չէ բնաւ, այլ ազգ-
չանքով և օրով վառուած անձնաւորաց
խմբագրապետ մը։ Տար Առաքեալ, ապրի
շատ, ապրի երկար, անաէր ազգի մը
ստանալով եղած իրաւունքները և Հայ
անունը պաշտպանելու համար։ «Մեճ-
մուսին» պէտք է մեծցունել և ընդարձա-
կել. «Երբեմն չարիք, ծնանք բարիք».
եղբայրներ, սթախինք, սթախինք...։
ՎԱՀԱՆ Գ. ՇԱՊԱՆՅԱՆ

ԽՈՏՈՐՄԱՆ, Սիւնի
1 Փետրուար 1912
Մեճմուսի. — Սոյն համակրական նա-
մակին առթիւ կ'արժէ մեր կողմէ մի քա-
նի խօսք ըսել։

Նախ շնորհակալութիւն կը յայտնեմ
թերթի խմբագրապետին և ռեդակցիան
մասին արտայայտուած համակրանքին և
քաջալերական խօսքերուն, որոնց անկեղ-
ծութեան կամկած չունինք, քանի որ ծա-
նօթ է մեզ արդէն ազնիւ սրտէ մը, վեհ
ոգիւ մը ըլլած ըլլալը Այսու հանդերձ
պարտք կը համարինք անկեղծ թէ ազ-
գային անհատի մը, Հայ-Կաթողիկէ հա-
սարակութեան թարգմանն եղող թերթի
մը խմբագրութեան պարտականութիւնն
է օր կը կատարենք և ոչ այլ ինչ։ Ինչ-
պէս տակէ առաջ ալ քանի քանի ան-
գամներ սոյն պարտականութիւնն կատա-
րած ենք, սկսեալ Հասունեան և Անթի-
Հասունեան պայքարին լուծման առթիւն,
որ ներկայացած է մեզ՝ տակէ քսան և վեց,
քսան և եօթ տարիներ առաջ։ Իսկ եթէ
թերթս միշտ չէ քննադատած, և այս
օրուան լեզուն չէ գործածած ազգային-
եկեղեցական առաջնորդներուն, զեկա-
վարներուն հանդէպ, ըլլան անոնք եկե-
ղեցական կամ աշխարհական, մանաւանդ
թէ զիրենք գոված և քաջալերած է, պատ-
ճառն այն է՝ որ իրենց արարքներուն մէջ
քննադատելի կէտեր չէ տեսած. զիրենք
որչափ կրօնասէր, եկեղեցասէր, այնչափ
ալ ազգասէր տեսած է. կամ թէ իրենք
պղծաբան երեւցած են։ Սակայն երբ Թեր-
զեան Գե-րապաշտապէն մը՝ ազգին համար
մահաւ և կեանք խնդրի մը մէջտեղ կը

Շուռ հաստէ պուռ պիտաբէլեր քիմէ, նէ-
բէյէ իլթիհա, միւրամաաթ իտէպիլր իտի-
լէր, էլ պէթթէ միլլիթիւ մէքզըզ իտարէսի
օլան կօւարթրթը խանէյէ, թոտիք ճէնտիտիսի
Է. Բաթիլրդ լէմսիլրէ, քանն քիմսէյէ,
վէ նախտա վէթըլիւնէ, իշթէ ճօլէ տէ
եաքմըշար, հալլէրինի անլաթմըշար, չօ-
լուգ, չօճուգ աօգագ, օրթիսարնտա գալ-

7. Թափառան մարտ 1 թարիխիւն պէր
 ճնը աթի պիտիբրինոր, «Իթալիա հիւ-
 ւմէթի, նէ կիպի շարթլար. ին աղտը
 Էրան մէլ իտէճէկինն տալի տէվլէթ-
 րին վագը օլանագ Էրաւլլէթինն զանէթ
 Էանի նիթիթլէ ճէվապ վերմոյէ մէլեալ
 Էւլունուեոր, Իթալիա, նոյ. 5 թարիխս
 նօթաւըլա Թարապլուսը Լարալն վէ
 նկագրինն իթալիանա ինագը իաւաթը
 Էթիթլէթն թէվլլը իթոմիլնտէ, Իտիւ-
 աննն մէնաֆիլի մէլլուսաւըն վէ հայ-
 թիթինն նէր Էուրէթլէ նաղարը իթիպա-
 ալմաղա հազըր պուսլանաղընը պիւ-
 լմիլ իտի. 0 վագըրթանա պէթու հէր
 գաւտար տէօրթ ալ կէշմիշ, վէ իթա-
 լիան անվալը աւգըրիտի իալլի տիւ-
 միշ իսէ տէ, Թոմ հիւրէթմէթի՝ Թու-
 պլուսը Լարպտա վէ Պէնկաղիտէ հու-
 ւըր հիւրթմաննիսինտէն ապա շաշմա-
 ագ, այնի էֆըհարը սուլլէրվէթանէ-
 տէ իսրար իթմէքաէ տիր, Մէզնէպ
 Էլէսիննէ կէլինճէ, Իթալիա՝ Պօնա-
 սլէին Սվաթրիսան ինագընտա աղա
 անա մուգապլլէնամէքա տէրն թաի-
 սուրիթլէ միւշապիհ պիր, Թարապլուսը
 պուլ իտէճէգ իսէ տէ, Թարապլուսը
 պտա վէ Պէնկաղիտէ էնալի իթալա-
 ի, ճէնտի իալիֆաւընը իաւըմագտա
 տէսի պրաքառագ տըր. Տիկէր Թա-
 րան իթալիա, Էւրլի էնալի հաղըն-

